

**ԷԼԵԿՏՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՔԻ ԴԻՄԵՎՈՐՈՒՄՆԵՐԸ՝
ՈՐՊԵՍ ԸՆՏՐՈՂՆԵՐԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ
ԻՆՔՆԱԳԳԱԾՈՂՈՒԹՅԱՆ ՉԱՓԱՆԻՇ
Ի. Ղազարյան**

Հողվածում ներկայացված են ընտրական (էլեկտորալ) վարքի բնորոշումը և այն բացահայտող հետազոտությունները, որոնց արդյունքում հնարավոր է դարձել հարաբերակցություն ստեղծել էլեկտորալ վարքի և հասարակության անդամների սոցիալական ինքնագագացողության դրական և բացասական դրսևորումների միջև: Հեղինակի կողմից նաև ներկայացվել է «սոցիալական ինքնագագացողություն» երևույթը, որը դեռ լայն տարածում չի ստացել սոցիալ-հոգեբանական գիտական շրջանակներում, սակայն արդեն իսկ հանդես է գալիս՝ որպես առանձին ֆենոմեն:

***Հանգուցային բառեր և արտահայտություններ՝** ընտրական համակարգ, էլեկտորալ վարք, ընտրողների սոցիալական ինքնագագացողություն, սպասելիքներ:*

Հասարակության ժողովրդավարացման գործընթացը ենթադրում է ժողովրդավարական մի շարք ինստիտուտների արագ զարգացում. հատկապես քաղաքական ընտրությունների համակարգի զարգացմամբ է պայմանավորված ժողովրդավարության կայունացումը տվյալ պետության մեջ:

Հողվածը նվիրված է ընտրողների վարքային առանձնահատկությունների, ընտրությունների նկատմամբ նրանց ունեցած վերաբերմունքի ուսումնասիրմանը:

Ընտրողների վարքը (այսուհետ՝ էլեկտորալ վարք) կարելի է սահմանել որպես տվյալ պետության քաղաքացիների՝ ընտրություններից առաջ, ընտրությունների ընթացքում և հետընտրական շրջանում դրսևորած գործողություններ, որոնք արտահայտում են նրանց վերաբերմունքն ընտրությունների ամբողջ ընթացքին: Էլեկտորալ վարքը դառնում է ընտրողների համար յուրահատուկ փորձ՝ հետագայում ընտրություններին մասնակցելու կամ ընտրություններն անտեսելու համար: Այսպիսով, էլեկտորալ վարքի նշված առանձնահատկությունների ուսումնասիրությունը թույլ է տալիս կատարել կանխագուշակումներ ընտրությունների համակարգի զարգացման և կատարելագործման մակարդակի վերաբերյալ՝ տվյալ հասարակության շրջանակներում: Կարելի է եզրակացնել, որ էլեկտորալ վարքը հանդես է գալիս հասարակության անդամների սոցիալական ինքնագագացողության չափման ամենաօբյեկտիվ ցուցանիշներից մեկը:

Էլեկտորալ վարքի ուսումնասիրության համար ժամանակակից սոցիոլոգիայում գոյություն ունի հատուկ մշակված մեթոդաբանություն, որն ընդգրկում է դրա տարբեր հայեցակետերը և ներառում է հասարակության բոլոր շերտերը՝ ընտրանքի հատուկ ներկայացուցչականության ապահովմամբ: Տվյալ մեթոդաբանությամբ հետազոտություններ կատարվել են բազմաթիվ երկրներում. ստորև մեր կողմից կներկայացվի այդ հետազոտությունների ակնարկային վերլուծությունը: Քանի որ ՀՀ տարածքում մինչ օրս կատարված չէ նշված մեթոդաբանությամբ ոչ մի հետազոտություն, ապա էլեկտորալ վարքի դրական և բացասական դրսևորումների մասին տեղեկությունները ներկայացվելու են առանց հայկական



քաղաքական դաշտի իրողությունները հաշվի առնելու: Այնուամենայնիվ, համաձայն ՀՀ տարածքում կատարված հարցումների, գոյություն ունի ընտրողների սովորական գանգված, որոնք բացասաբար են տրամադրված ընտրություններին մասնակցելու հարցին, ուստի այդ տրամադրվածության պատճառները ուսումնասիրելու միջոցների կարիքը վաղ թե ուշ կառաջանա: Բացի այդ, ընտրությունների արդար արդյունքների նկատմամբ գոյություն ունեցող կասկածը ևս հանդիսանում է էլեկտորալ վարքի բացասական դրսևորումներից, որը հետագայում կարող է բերել ընտրությունների նկատմամբ անտարբերության: Ահա հարցերի այն շրջանակը, որը մենք նպատակ ունենք ներկայացնելու տվյալ հոդվածում:

Մեր կողմից վերլուծության օբյեկտ են հանդիսացել երկու խոշոր հետազոտություններ, որոնք անց են կացվել ՌԴ-ում և ԱՄՆ-ում նախագահական ընտրությունների ընթացքում [1, 2, 3]: Հետազոտությունների նպատակն է եղել պարզել, թե ինչ սպասելիքներով և տրամադրվածությամբ են ընտրողները հաճախում ընտրությունների, որ գործոններն են նպաստում ընտրությունների մասնակցությանը և որոնք՝ խանգարում: Որպես արդյունք՝ հետազոտողները դուրս են բերել հասարակության տարբեր շերտավորումների էլեկտորալ վարքի առանձնահատկությունները, ռիսկային խմբերը, «ցավոտ» հարցերը: Այսպես, ՌԴ-ում կատարված հետազոտության ընթացքում ուսումնասիրության հիմնական չափանիշներ էին օրենսդրության վերաբերյալ ընտրողների տեղեկացվածությունը, թեկանծունեների կենսագրություններին ծանոթ լինելը, վերաբերմունքը երկրում տիրող քաղաքական վիճակին, նախընտրական միջոցառումներին մասնակցությունը, ՁԼՄ-ների աշխատանքի գնահատականը, ընտրությունների ազատությունը, ընտրությունների համակարգի կատարելությունը և այլն [1, c.12]: ԱՄՆ-ում կատարված հետազոտությունները ընդգրկել էր հետևյալ չափանիշները. ընտրողների սպասելիքներն ընտրության գործընթացի վերաբերյալ, ընտրողների նախորդ փորձը, ընտրությունների կազմակերպման գնահատականը (ընտրատեղամասերի հարմար տեղավորվածություն, ընտրական հանձնաժողովի անդամների աշխատանքը), ընտրությունների գաղտնիությունը, ինչպես նաև հետընտրական զարգացումները՝ արդար, ճշգրիտ արդյունքներ [3]: Հաշվի առնելով այն փաստը, որ ԱՄՆ-ում ժողովրդավարական ընտրությունների փորձն ունի ավելի հարուստ պատմություն, քան ՌԴ-ում և երկու երկրներում տիրող քաղաքական իրավիճակների տարբերությունները, ԱՄՆ-ում կատարված հետազոտությունների ընթացքում կարիք չի առաջացել հաշվի առնել մի շարք չափանիշներ որոնք ՌԴ-ի համար կարևոր էին (օրինակ՝ ընտրական օրենսդրությանը և ընթացակարգին ծանոթ լինելը) [1, c. 21]: Հարկ է նշել նաև, որ ՌԴ-ում ժողովրդագրական ընդհանուր տվյալներից բացի հաշվի էին առնվում ռեզիդնալ առանձնահատկությունները (օրինակ, մայրաքաղաքից հեռավորության աստիճանը), իսկ ԱՄՆ-ի հետազոտության մեջ առանձնահատուկ ուշադրություն էր դարձվել էթնիկական (լատինամերիկյան բնակչության) և ռասայական խմբերին:

Կատարված հետազոտությունների արդյունքում պարզ դարձան էլեկտորալ վարքի դրդապատճառները և դրսևորման առանձնահատկությունները ուսական և ամերիկյան հասարակություններում՝ կոնկրետ ժամանակահատվածի սահմաններում: Ըստ ստացված տվյալների՝ ամերիկյան ընտրողները ավելի հանդուրժող վերաբերմունք էին ցուցաբերել ընտրությունների ընթացքին և գնահատել սեփական փորձը՝ որպես դրական: Միակ հարցը, որն արժանացել էր չե-

գոք, և, որոշ նահանգներում՝ բացասական գնահատականի, ընտրությունների գաղտնիությունն էր: Այս փաստը կապված էր ամերիկյան ընտրական համակարգի տեխնիկական հագեցվածության հետ: Ընտրողների մեծ մասը համոզված էր, որ իրենց ընտրությունը, հավանաբար, հետախուզվում է հատուկ ծառայությունների կողմից: Այնուամենայնիվ, ընտրությունների արդար արդյունքների վրա այս փաստն, ըստ ընտրողների, չէր ազդի [3]:

Այսպիսով, ամերիկյան ընտրողներն, ունենալով էլեկտրալ վարքի հարուստ փորձ, դրական են տրամադրված հետազայում ընտրություններին մասնակցելուն, ունեն բազմաթիվ սպասելիքներ և կուռ համոզվածություն, որ դրանք կիրականանան:

Այլ պատկեր է ստեղծվում, երբ ուսումնասիրության ենք ենթարկում Ռուսաստանում կատարված հետազոտությունների արդյունքները, որոնք հարուստ նյութ են մատուցում մեզ՝ հողվածում արժարծվող հիմնախնդիրները ներկայցնելու համար: Նշված հետազոտություններն իրականացվել են 20-րդ դ. 90-ականների կեսին և վերջին, ուստի ժամանակաշրջանը (ԽՍՀՄ-ի փլուզում, անկայուն սոցիալ-տնտեսական և քաղաքական վիճակ, ժողովրդավարական ընտրությունների մինիմալ փորձ) թելադրում էր ընտրողների էլեկտրալ վարքի յուրահատկությունները: Նույն ժամանակաշրջանում նաև Հայաստանն է անցել նման ուղի, ուստի հետազոտությունների արդյունքները, կապված էլեկտրալ վարքի բացասական դրսևորումների հետ, որոշ վերապահումներով, կարելի է վերագրել նաև մեր հասարակության մեջ ընթացող գործընթացներին:

ՌԴ-ում կատարված հետազոտությունները բացահայտեցին հասարակության վերաբերմունքը իշխանական և քաղաքական ինստիտուտներին, որոնցից մեկը ընտրությունների համակարգն էր: Ընդհանուր առմամբ բնակչությունը հայտնել է անվստահություն և հիասթափություն նշված ոլորտների նկատմամբ, ինչի հետևանքով առաջացել է վախ ապագայի նկատմամբ և հոռետեսական հեռանկարների ակնկալում: Այս ամենը ստիպում է հասարակությանը վերանայել էլեկտրալ վարքի դրդապատճառները՝ անիմաստ համարելով ընտրությունները, որոնք չեն հանգեցնում էական փոփոխությունների [2, c. 8]:

Հասարակության արձագանքը պետությունում կատարվող բարեփոխումներին, որոնք, ինչպես վկայում է պատմությունը, երբեք սահուն չեն անցել, բերում է դրա անդամների անկայուն հոգեվիճակների, սթրեսների և լարվածության բարձրացմանը: Դժվարանում են սոցիալական փոխներգործությունները, ինչպես միկրո, այնպես էլ մակրոմակարդակներում: Ժամանակակից սոցիալական գիտություններում նշված երևույթները համակարգվել են «սոցիալական ինքնազգացողություն» հասկացության մեջ: Այն շրջանառության մեջ է դրվել 20րդ դ. երկրորդ կեսին, և տարբեր հեղինակներ տվել են բազմաթիվ բնորոշումներ դրան: Ամենատարածված բնորոշումը ներկայացնում է սոցիալական ինքնազգացողությունը որպես մասայական գիտակցության հատուկ վիճակ, որի ժամանակ ամբողջ հասարակությունը կամ դրա առանձին խմբեր ունեն սոցիալական կեցությամբ բավարարվածության տարբեր աստիճաններ, որոնք պայմանավորված են հասարակության մեջ զբաղեցված դիրքով, ընդհանուր սոցիալ-քաղաքական վիճակով և էլեկտրալ մշակույթի զարգացման մակարդակներով [2, c. 33]: Հողվածում նշված հետազոտությունները վկայում են դրական սոցիալական ինքնա-



զգացողության մասին ամերիկյան հասարակության մեջ՝ լավատեսության, բավարարվածության զգացումներով հանդերձ, և բացասական, տագնապային սոցիալական ինքնազգացողության մասին ռուս հասարակության մեջ՝ ֆրուստրացիայի, սթրեսային վիճակների, ապագայի նկատմամբ հոռետես տրամադրվածությամբ: Ըստ հետազոտողների՝ ուսումնասիրությունների արդյունքներից կարելի է կանխատեսել հասարակության էլեկտորալ ակտիվությունը, ինչի մասին է վկայում ավելի ուշ անցկացված ընտրությունների մասնակցության վիճակագրությունը [2, c. 41]:

Հարկ ենք համարում նշել սոցիալական ինքնազգացողության դրսևորումների և գործառնության հիմնական առանձնահատկությունները՝ շեշտը դնելով դրանց հոգեբանական կողմի վրա:

Վ. Կելայեր հասարակության սոցիալական առողջության հիմքում դնում է հետևյալ ցուցանիշները. մարդու անձի բարձր կարգավիճակ, կենսակերպի բարձր որակ (կյանքի երկար տևողություն, լավ բժշկական սպասարկում և այլն), մարդու համար ինքնաիրականացման բազմաթիվ հնարավորությունների առկայություն, կրթվածության բարձր մակարդակ, հասարակական համաձայնության բարձր մակարդակ, բնակչության ֆրուստրացվածության, ներտիզացիայի մակարդակ՝ նորմայի սահմաններում, իրավագիտակցության բարձր մակարդակ, տեղեկատվության փոխանցման ճկուն և թափանցիկ համակարգի առկայություն, հասարակության անդամների ռեֆլեքսիայի ունակություն [4]: Նշված առանձնահատկություններից հոգեբանների ուշադրության կենտրոնում են գտնվում բնակչության հոգեկան առողջության, ինքնաիրականացման, ռեֆլեքսիայի կայուն մակարդակի պահպանումը, ինչը պայմանավորում է սոցիալական ինքնազգացողության սոցիալ-հոգեբանական կողմը: Ակնհայտ է, որ այս առանձնահատկությունները պատշաճ մակարդակի վրա պահելու համար, հասարակության յուրաքանչյուր անդամ կնախընտրի այն սոցիալ-քաղաքական համակարգը, որի գործառնությունը կնպաստի այս երևույթների մշտական զարգացմանը: Ուստի, սոցիալական ինքնազգացողության դրական դրսևորումները կբերեն բնակչության կողմից էլեկտորալ վարքի ակտիվացմանը և ընտրությունների համակրգի նկատմամբ վստահության բարձրացմանը:

Ն. Լապինն, իր հերթին, նշում է սոցիալական ինքնազգացողության հետևյալ բաղադրիչները.

- բնակչության պաշտպանվածության մակարդակը հիմնական սոցիալական վտանգներից՝ հանցագործություններ, աղքատություն, բնապահպանական խնդիրներ և այլն:
- մարդկանց ինքնուրույնության մակարդակը՝ սեփական կենսական խնդիրների լուծման ժամանակ
- կյանքով ընդհանուր բավարարվածության մակարդակ
- ապագայի և ներկայի լավատեսական գնահատականի առկայություն [5]:

Տարբեր ժամանակաշրջանում այս բաղադրիչները կարող են գտնվել զարգացման տարբեր մակարդակների վրա, ուստի սոցիալական ինքնազգացողությունը միշտ դինամիկ փոփոխությունների մեջ է, և այն չափելու համար հարկավոր կլինեն բազմաչափ գործոններ: Բարեփոխումների ճանապարհին գտնվող հասարակություններին հատուկ է սոցիալական ինքնազգացողության զարգաց-



ման ասիմետրիկ ընթացք. որոշ արժեքներ մնում են կայուն մասայական գիտակցության մեջ, իսկ որոշները՝ ենթարկվում են փոփոխությունների՝ կապված մարդկանց կենսակերպի, սոցիալ-մշակութային պայմանների փոփոխման հետ: Կարևոր է նաև հաշվի առնել, թե հասարակության որ խումբն է առավել զգայուն բարեփոխումների և առավել խոցելի՝ սոցիալական ինքնազգացողության բացասական դրսևորումներ ձեռք բերելու հանդեպ:

Այսպիսով, ուսումնասիրելով սոցիալական ինքնազգացողության և էլեկտորալ վարքի հարաբերակցության առանձնահատկությունները, կարելի է եզրակացնել, որ ընտրությունների համակարգի զարգացումը և արդար, օրինական ընթացքն ուղղակի կապ ունի հասարակության սոցիալական ինքնազգացողության հետ, ինչի մասին են վկայում լայնածավալ սոցիոլոգիական և սոցիալ-հոգեբանական հետազոտությունները: Հայաստանում դեռևս չի եղել այդ կարգի հետազոտություններ կազմակերպելու փորձ, սակայն, մեր կարծիքով, անկախության 20 տարվա ընթացքում սոցիալական ինքնազգացողությունը զգալի և, մեծ մասամբ, բացասական փոփոխություններ է կրել հայ բնակչության մոտ, և դրան նպաստող առաջնահերթ գործոններից է եղել ընտրական համակարգի անկատար լինելը, ինչի հետևանքով մարդկանց էլեկտորալ վարքը չի զարգացել:

Գրականություն

1. **Охременко И.В.** Электоральное поведение: теория вопроса: Учебное пособие: В 2 ч. Ч. 1. – Волгоград: Издательство ВолГУ, 2002. – 52 с.
2. **Охременко И.В.** Электоральное поведение: социологическая ретроспектива конца 90-х годов XX века: Учебное пособие: В 2 ч. Ч. 2. – Волгоград: Издательство ВолГУ, 2002. – 56 с.
3. **Herrnson Paul S.** Expectations and Satisfaction with the Voting Process in the 2008 U.S. Presidential Election.
polisci.osu.edu/conferences/2008election/papers/Herrnson.pdf
4. **Келасьев В.Н.** Социальная защита населения и власть. Журнал социологии и социальной антропологии. 1999. Т. 2. № 2. С. 80-89.
5. **Лапин Н.И.** Базовые ценности, социальное самочувствие и доверие к институтам власти. - www.hse.ru/data/373/846/1235/Lapin.doc

ЭЛЕКТОРАЛЬНОЕ ПОВЕДЕНИЕ КАК ПОКАЗАТЕЛЬ СОЦИАЛЬНОГО САМОЧУВСТВИЯ ИЗБИРАТЕЛЕЙ

И. Казарян

В статье представлены исследования, посвященные проблеме электорального поведения избирателей в период избирательной кампании и после нее. Автором проанализированы и сопоставлены данные исследований, проведенных в России и США, на основе которых выявлена связь между проявлениями электорального поведения и социальным самочувствием граждан. Также представлены основные компоненты социального самочувствия – относительно нового явления в современной социальной науке.